ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 483-21

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

«17» «12» 2021թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Արմինե Խառատյանի (այսուհետ՝ Պետական մարմին), որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Փարթ ՄՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս՝ տնօրենի լիազորված անձ Հայկ Գուլքանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի նոյեմբերի 4-ի N 1903-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում)՝ կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից սկսված պատերազմական գործողությունների շրջանակներում Ընկերության ոչ համապատասխան փաստաթղթավորման արդյունքում առաջացած Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված հարկային պարտավորությունների, մասնավորապես շահութահարկի, վճարման նպատակով Ընկերությանը որպես աջակցություն հատկացնել **1230 «Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր»** ծրագրի **12004 «Ռազմական գործողությունների հետևանքով ոչ համապատասխան փաստաթղթավորման արդյունքում առաջացած հարկային պարտավորությունների վճարման նպատակով «Փարթ ՄՄ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը պետական աջակցություն» միջոցառմամբ նախատեսված *191,807.6 հազ. (հարյուր իննսունմեկ միլիոն ութ հարյուր յոթ հազար վեց հարյուր) դրամ գումարը*:**

1.2. Ընկերության կողմից իրականացվելիք հարկային պարտավորությունների կատարման վերջնաժամկետը սահմանվում է 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1 Ընկերությունից պահանջել հարկային պարտավորությունները մարել Պայմանագրով սահմանված ժամկետներում,

2.1.2 Ընկերությունից պահանջել Ծրագրի կատարման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 13-ի N 254-Ն հրամանով հաստատված ձևով (ձև Հ-2, Հ-4 և Հ-8) եռամսյակային և տարեկան աճողական հաշվետվություններ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 10-ը, ինչպես նաև հաշվետվություն՝ սույն գումարի չափով շահութահարկի վճարման վերաբերյալ, Պետական մարմնի կողմից գումարը Ընկերությանը փոխանցելու օրվանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

2.1.3 Պայմանագրով սահմանված պահանջները չկատարելու դեպքում չընդունելու իրականացված ծախսը՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Ընկերությունից պահանջելու վճարել սույն Պայմանագրի 5.1 կետով նախատեսված տուգանքը,

2.1.4 սույն Պայմանագիրն օրենքով կամ սույն Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու պետական բյուջե վերադարձնել չվճարված գումարները:

2.2 Ընկերությունն իրավունք ունի՝

2.2.1 Պետական մարմնի կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառած վնասները:

2.3 Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. իրականացված Ծրագրի մասին ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված Ծրագրային N 1 հավելվածի միջոցառումը համապատասխանում է Ծրագրի և սույն Պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են Պայմանագրին կից Ձև N 1-ի ձևաչափով կազմված ընդունման- հանձնման արձանագրությամբ:

2.4 Ընկերությունը պարտավոր է՝

2.4.1. իրականացնել Ծրագրի շրջանակներում Պետական մարմնի կողմից տրամադրված գումարների՝ ՀՀ ֆինանսների նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 24 -ի թիվ 725-Ն հրամանով հաստատված Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի հաշվապահական հաշվառման ստանդարտների դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.2. Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և (կամ) սույն Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3. կատարել Պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4. սույն Պայմանագրով սահմանված կարգով Պետական մարմին ներկայացնել N 1 հավելվածի միջոցառման իրականացման մասին հաշվետվություններ, իսկ Ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն,

2.4.5. սույն Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6. Սույն Պայմանագրով նախատեսված N 1 հավելվածի միջոցառման տարեկան արդյունքները Պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո՝ միջոցառման իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները /խնայողությունները/ վերադարձնել ՀՀ պետական բյուջե ոչ ուշ, քան մինչև 2021 թվականի դեկտեմբերի 20-ը:

2.4.7. Սույն Պայմանագրի 1.1 կետում շահութահարկի վճարման նպատակով նախատեսված գումարը չի կարող ուղղվել այլ նպատակների և չօգտագործված գումարը 2021 թվականին ենթակա է վերադարձման ՀՀ պետական բյուջե:

3. Մոնիթորինգը

3.1 Պետական մարմինը Ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2 Մոնիթորինգն իրականացվում է Պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Ընկերությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4 Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է Ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում Ընկերությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Սույն Պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է Ծրագրի կատարման համար Ընկերությանը, որպես դրամաշնորհ վճարել Պայմանագրի 1.1 կետով նախատեսված գումարը:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը պարտավորվում է Պետական մարմնին փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում՝ տուգանքի վճարումը Ընկերությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Պետական մարմինը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Ընկերությանը վճարվելիք գումարներից:

6. Պայմանագրի գործողության ժամկետը

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1 Պայմանգիրը կազմված է սույն հիմնական տեքստից, Հավելվածից և Ձևից, որոնք կազմում են Պայմանագրի անբաժանելի մասը.
Հավելված -Ծրագրի միջոցառում,
Ձև – Հանձնման-ընդունման արձանագրություն:
8.2 Պայմանագրի շրջանակներում կատարված աշխատանքները ընդունվում են Պայմանագրին կից Ձևի հանձնման-ընդունման արձանագրությամբ, որը Պայմանագրի 2.1.2 կետում նշված ժամկետներում, Հաշվետվության հետ միասին, երկու օրինակից լրացված, ստորագրված և կնքված ներկայացվում է Ընկերության կողմից:
8.3 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:
8.4 Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, երկու օրինակից, բաղկացած է 7 (յոթ) էջից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:
8.5 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պետական մարմին

ՀՀ էկոնոմիկայի նախարարություն

Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5

Կենտրոնական գանձապետական
գործառնական վարչություն

Հ/Հ 900011

ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի
պարտականությունները կատարող՝

ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ

Կ.Տ.

Ընկերություն

«Փարթ ՄՄ» ՍՊԸ
Հասցե՝ 0010, ք.Երևան, Կենտրոն,
Անտառային 21

«Յունիբանկ» ԲԲԸ
Հ/Հ 24100277279600

ՀՎՀՀ 00130949

Տնօրենի լիազորված անձ՝

ՀԱՅԿ ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

Կ.Տ.

Հավելված

2021 թվականի 12 17 կնքված

N 483-21 պայմանագրի

ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

հ/հ	Իրականացվելիք միջոցառման					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնա-ժամկետը	Պահանջ վող գումարը (հազ. դրամ)
1	**«Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման» ծրագիր:**	*Ռազմական գործողությունների ընթացքում իրականացված ծառայությունների ոչ համապատասխան փաստաթղթավորման արդյունքում առաջացած հարկային պարտավորությունների վճարման նպատակով «ՓարթՄՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը պետական աջակցության տրամադրում*	*Ռազմական գործողությունների ընթացքում իրականացված ծառայությունների ոչ համապատասխան փաստաթղթավորման արդյունքում առաջացած հարկային պարտավորությունների վճարում*	*Հարկային պարտավորություն ների մարում, Ընկերության բնականոն գործունեության ապահովում*	25.12.2021 թ.	191,807.6
Ընդամենը						191,807.6

Պետական մարմին
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Հասցե՝ 0010, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5
Կենտրոնական գանձապետական գործառնական վարչություն
ՀՀ 9000110
ՀՎՀՀ 02698604

Գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող՝
ԱՐՄԻՆԵ ԽԱՌԱՏՅԱՆ
Կ.Տ.

Ընկերություն
«Փարթ ՄՄ» ՍՊԸ
Հասցե՝ 0010, ք.Երևան, Կենտրոն, Անտառային 21
«Յունիբանկ» ԲԲԸ
ՀՀ 24100277279600
ՀՎՀՀ 00130949
Տնօրենի լիազորված անձ՝
ՀԱՅԿ ԳՈՒԼՔԱՆՅԱՆ

Լիազորագիր

Ք. Երևան 16.12.2021թ.

Ես՝ Փարթ ՄՄ ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00130949) տնօրեն Կարեն Ասատրյանս, (_ՆՔ 011552197 տրվ. 22.06.2021թ. 004-ի կողմից,) լիազորում եմ _Հայկ Գուլքանյանին (ՆՔ 003434594 տրվ. 03.03.2014թ. 004-ի կողմից, հասցե՝ ք. Երևան Բաղրամյան 22/4) ներկայացնել ընկերությունը ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում, ընկերության անունից ստորագրել դրամաշնորհի պայմանագրեր:

Լիազորագիրը տրվում է 1 տարի ժամկետով մինչև 16.12.2022թ.:

Տնօրեն՝ Կ. Ասատրյան

«ՓԱՐԹ ՍՍ»
"ПАРТ ММ"
"PART MM"
00130949